պայմանների փոփոխությունն ավելի շուտ անդրադարձավ գավառի վարչական, քան թե տնտեսական կյանքի վրա։

Աղյուսակ 6

Բնակավայրի անունը	Տների թիվը 1823 թ.	Տների թիվը 1931 թ.
Տաթև	53	107
Հալիձոր	11	135
Տեղ	111	622
Խնձորեսկ	170	599
Բռնակոթ	66	354
Արծվանիկ	11	187
Սևքար	11	103
Գորիս	80	954
Ընդամենը՝ . . .	513	3·061

Այդ պատճառով գերդաստանն էլ, որպես տնտեսական միավոր, ավելի ուշ սկսեց ենթարկվել ձևափոխության, քան թե գյուղական համայնքը, որը կազմում էր հասարակության վարչական կառուցվածքի էական մասը։ Քանի ավելի էր Զանգեզուրը դուրս գալիս իր տնտեսության փակ վիճակից, մանավանդ 80-ական թվականներին անդրկովկասյան երկաթուղու գծի շարունակության կառուցման հետ զուգորդված[11], այնքան արագ էր մեծ գերդաստանը բաժանվում մանր ընտանիքների և դրա հետ միասին կենցաղը մտնում էր նոր ընթացքի մեջ։ Թաղերում խոշոր գերդաստաններին հատկացրած տնատեղերի նեղվածությունն ավելի և ավելի էր հարկադրում նոր բաժանված ընտանիքներին իրենց բնակարանային և տնտեսական շենքերը թաղից դուրս, պապենական օջախներից հեռու կառուցել, կտրվել իրենց արյունակիցներից և տնավորվել իրենց համար բոլորովին նոր շրջապատի մեջ։ Տնտեսական, թե այլ նեղ բոպեին, մանավանդ, երբ հարկավոր էր լինում ավելի ինվենտար և բանվորական ուժ ձեռքի տակ ունենալ, իսկ մանր տնտեսության մեջ այդ բանի կարիքը ավելի հաճախ և ավելի սուր էր զգացվում, քան թե խոշոր գերդաստանային տնտեսության մեջ։ Ընտանիքը բնականաբար առաջին հերթին դիմում էր իր դրկից տան օժանդակությանը և ոչ թե հեռու բնակվող իր ազգականին։ Նա ինքն իր մեջ չէր գտնում կարողություն ստեղծվող տնտեսական դժվարությունները առանձին, սեփական միջոցներով հաղթահարելու, հարկադրված էր լինում ավելի հաճախ դիմելու միջի կոչված փոխադարձ օգնության ձևին՝ բուրդը գզելու և մանելու համար, հարակաշությանը[12], քանի որ ինքը ի վիճակի չէր մենակ իր ունեցած անասունով դուրս գալ արտը վարելու, ոչ թե 8—12 լուծ եզ ու գոմեշ պահանջող գութանով, նույնիսկ 2—3 լուծով աշխատող վեցկիավ։ Հարկավոր էր հարևանի օգնությունը նաև այն դեպքում, երբ տունը հյուրեր էին գալիս և անկողինների պակասություն էր զգացվում, իսկ հյուրասիրության ավանդական բարոյախոսությունն անխուսափելիորեն

[11] Տփղիս—Բաքու երկաթգծի բացումը տեղի ունեցավ 1882 թ.։

[12] Կիսովի միասին ցանելուն։